ՍԱՂՄՈՍ 130

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
ՏԻՐՈՋ ներող սիրո վրա հույսը <u>MT ներածություն</u> Աստիճանների երգ	ՏԻՐՈՋ փրկության սպասում	Անձնական նեղությունից ազատվելու սպասում	Օգնության համար աղոթք	Խորունկ տեղերից
130:1-4	130:1-2	130:1-2	130:1-4	130:1-2
	130:3-4	130:3-4		130:3-4
130:5-8	130:5-6	130:5-6	130:5-6	130:5-7ա
	130:7-8	130:7-8	130:7-8	130:7բ-8

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության <u>ուղեցույց</u> մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

ՀԱՄԱՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Սա այն Սաղմոսներից է, որ խոսում է հավատարիմ հետևորդների խորին ցանկությունների և հույսերի մասին:
1. կան խնդիրներ, մեղքեր և հիասթափություններ
2. հավատացյալը կանչում է իր միակ հույսին՝ ՅԱՀՎԵԻՆ
3. Նա լսում է և ներում
4. Նա հավատարիմ է Իր բնավորությանը և խոսքին, անգամ երբ մարդիկ հավատարիմ չեն (տես՝ Սաղմ. 51:1):

Բ. Սաղմոսում կիրառվում են Իսրայելի Աստծո մի քանի անուններ:
1. ՅԱՀՎԵ, Սաղմ. 130:1,5,7 (երկու անգամ)
2. *Յահ,* Սաղմ. 130:3 (ՅԱՀՎԵ անվան հապավումը)
3. *Ադոն,* Սաղմ. 130:3,6

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Դ.</u>
<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՏԵՐ (*Ադոն և Կուրիոս*)</u>

Գ. Այս Սաղմոսը արտահայտում է նորոգության թե՛ անհատական և թե՛ հավաքական կարոտ (տես՝ Սաղմ. 130:7-8):

1. Սաղմ. 130:7, «առատ փրկություն» (BDB 915 I, KB 1176, *Hiphil* ԱՆՈՐՈՇ ԲԱՂԱԴՐՅԱԼ)
2. Նա (և միայն Նա) փրկելու է – ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ ավելացրած ԲԱՅԻՆ՝ շեշտադրության համար:
   <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿԱԳԻՆ, ՓՐԿԱԳՆԵԼ</u>

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 130:1-4
[1]Խոր տեղերից Քեզ կանչեցի, ո՛վ ՏԵՐ:
[2]ՏԵ՛Ր, լսի՛ր իմ ձայնը, Քո ականջները թող լսեն իմ աղոթքի ձայնը:
[3]Եթե Դու, ՏԵՐ, անօրենությունները հիշես, ՏԵ՛Ր,
Ո՞վ կարող է կանգնել:
[4]Բայց Քո մոտ ներում կա,
Որպեսզի Քեզնից վախենան:

130:1 «Խոր տեղերից» Այս ԳՈՅԱԿԱՆԸ (BDB 771) ունի մի քանի փոխաբերական կիառություններ: Այն հիմնականում նշանակում է «խորը»:
1. նեղությունը նկարագրված որպես ջրհեղեղներ, տես՝ Սաղմ. 69:1-2, 14-15 (Սաղմ. 42:7ա, 88:7-ի պես նկարագրություն)
2. ՅԱՀՎԵՆ որպես ջրերի քաոսը հաղթող, տես՝ Եսայի 51:9-10 (Սաղմ. 74:12-17, 89:9-10 պես նկարագրություն)
3. Տյուրոսի ծովի զորության պարտությունը (այսինքն՝ ծովում խորտակված), տես՝ Եզեկ. 27:34
4. հավանաբար անդրադարձ *Շեոլին,* տես՝ Հովնան 2:2-6, Սաղմ. 18:4-5, 69:2,14-15
   <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՋՐԵՐ</u>
   <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. *ՇԵՈԼ*</u>

❖ **«Քեզ կանչեցի»** Սաղմոսերգուի նեղության ստույգ բնույթը չի ասվում, սակայն այն կապ ունի իր մեղքի զգացողության հետ (տես՝ Սաղմ. 130:3-4): Նա իրեն օտարացած է զգում, սակայն գիտի, որ Աստված ներելու է և վերականգնելու զղջացող, համբերատար հետևորդին (տես՝ Սաղմ. 130:5-6):

130:2 Այս համարն արտացոլում է սաղմոսերգուի աղոթքը, որը նշված է Սաղմ. 130:1-ում՝
1. լսիր – BDB 1033, KB 1570, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. Քո ականջները թող լսեն/ուշադիր լինեն – BDB 224, KB 243, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈՒՆ ՆԿԱՐԱԳՐՈՂ ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ</u>

130:3-4 Անգլերեն մի քանի թարգմանություններ այս երկու համարները իրարից առանձին պարբերություններում են ներկայացնում (այսինքն՝ NKJV, NRSV, NJB):

Ծննդոց 3-ի Անկումից հետո ամբողջ մարդկության մեղավորության իրողությունը Աստվածաշնչի ամբողջ բովանդակությամբ պարբերաբար կրկնվող թեմա է:
1. Ծննդոց 3:17-19, 6:5,11-12, 8:21
2. 3 Թագավորաց 8:46
3. 2 Մնացորդաց 6:36
4. Եզրաս 9:15
5. Հոբ 4:17, 9:2, 15:14-16, 25:4
6. Սաղմոս 51:5, 76:7, 130:3, 143:2
7. Առակաց 20:9
8. Ժողովող 7:20
9. Եսայի 53:6

10. Նաում 1:6
11. Մաղաքիա 3:2
12. Հռոմեացիների 3:9-18, 19, 23, 11:32
13. 1 Հովհաննես 1:8-10
14. Հայտնություն 6:17

Բոլորը կարիք ունեն ներման: Մարդիկ ներում ստանալու կարիքը չեն զգում մինչև որ Հոգին հստակ չի հայտնում մեր կարիքը: Փրկչի կարիք չկա, քանի դեռ չկա կորած լինելու զգացումը: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՆԵՐՈՒՄԸ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ

Ներումը հնարավոր է՝

1. Աստծո գթառատ, անփոփոխ բնավորության շնորհիվ (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼԻ ԱՍՏԾՈ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԾԵՐԸ (ՀԿ))
2. Մեսիայի ավարտած գործի շնորհիվ (տես՝ Եսայի 53, Մարկոս 10:45, 2 Կորնթ. 5:21)
3. Սուրբ Հոգու մոտեցման, հետամուտ լինելու շնորհիվ (տես՝ Հովհաննես 6:44, 65, 16:8-15):

130:3 «նշես/հիշես» Այս ԲԱՅԸ (BDB 1036, KB 1581, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) այս համատեքստում մատնացույց է անում արձանագրություն պահելը: Սա արտացոլվում է Աստծո «երկու գրքերում» (այսինքն՝ գործերի՝ հիշատակի գիրքը և կյանքի գիրքը, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ԵՐԿՈՒ ԳՐՔԵՐԸ): Սա Աստծո հիշողության նկարագրություն է:

Հետաքրքիրն այն է, որ Աստծուց դարձյալ ու դարձյալ խնդրվում է, որ մոռանա մեր մեղքերը (այսինքն՝ Սաղմ. 79:8, 106:6, Եսայի 64:9, Միքիա 7:18), սակայն հիշի Իր խոստումները: Դատաստանի Օրը գրքեր են բացվելու (տես՝ Դան. 7:10, Հայտն. 20:12):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ԵՐԿՈՒ ԳՐՔԵՐԸ

❖ **«ո՞վ կարող է կանգնել»** Սա ենթադրում է դատարանի տեսարան, որտեղ ՅԱՀՎԵՆ արդար դատավորն է (տես՝ Եզրաս 9:6,15, Սաղմ. 76:7, Նաում 1:6, Մաղ. 3:2, Հայտն. 6:17):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԴԱՏԱՍՏԱՆԸ ՆԿ-ՈՒՄ

130:4 «վախենան» Գթառատ Աստծո կողմից ձրի և կատարյալ ներման արդյունքը Աստծո հետ անձնական փոխհարաբերության վերականգնումն է (այսինքն՝ Ծննդոց 3-ի Անկման մեջ կորսված), որը ստեղծագործության նպատակն է/էր/և լինելու է: Մենք ստեղծվել ենք Նրա կողմից և Նրա համար: Վախը այն ակնածանքն է, որին արժանի է Նա: Ներումը հանգեցնում է փոխհարաբերության:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՎԱԽ (ՀԿ)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 130:5-8
5Ես ՏԻՐՈՋՆ եմ սպասում, իմ անձն սպասում է,
Ու իմ հույսը Նրա խոսքի վրա է:
6Առավոտյան պահին սպասողներից,
Առավոտյան պահին սպասողներից ավելի
Իմ անձը ՏԻՐՈՋՆ է սպասում:
7Իսրայելը թող ՏԻՐՈՋԸ հուսա,
Քանի որ ՏԻՐՈՋ մոտ ողորմություն կա,
Ու Նրա մոտ առատ փրկություն կա:
8Նա փրկելու է Իսրայելը իր բոլոր անօրենություններից:

130:5-8 Այս պարբերությունը շեշտադրում է հավատարիմ հետևորդների Աստծո և Նրա խոսքի վստահության մեջ ունեցած համբերության թեման (տես՝ Սաղմ. 130:5): «Հավատքով սպասելու» հասկացությունը այս պարբերության մեջ արտահայտվում է երկու բառով:

1. BDB 875, KB 1082 – Սաղմ. 130:5 (երկու անգամ) և ենթադրվում է Սաղմ. 130:6, տես՝ Սաղմ. 25:3,21, 27:14, 40:1, 56:7
2. BDB 403, KB 407 – Սաղմ. 130:5,7, տես՝ Սաղմ. 38:15, 42:5, 43:5

Սա այն վայրն է, որտեղ Աստծո ինքնիշխանությունը միջնորդում է ընկած մարդկությունից պահանջվող կամային արձագանքի համար: Հավատարիմ հետևորդները ընտրում են սպասել, հուսալ, վստահել Աստծուն և Նրա խոստումներին, նույնիսկ երբ հանգամանքներն ու զգացողությունը գոռում են այլ ճանապարհով գնալ:

130:6 Կարոտի սպասման այս նկարագրությունը նման է Սաղ. 42:1-2-ին: Աստծո ժողովուրդը փափագում է Նրան:

❖ **«անձ»** Տես ամբողջական գրառումը Ծննդ. 35:18-ում՝ www.freebiblecommentary.org

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. *NEPHESH*

130:7 Մինչ սաղմոսերգուն փափագում, սպասում, ապավինում և վստահում է ՅԱՀՎԵԻՆ, այժմ նա կոչ է անում Աստծո ժողովրդին նույնը անել:
Նկատե՛ք, թե ինչպես է բնութագրվում ՅԱՀՎԵՆ՝

1. ՏԻՐՈՋ մոտ ողորմություն կա (այսինքն՝ ուխտի հավատարիմ սերը, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ (*hesed*))
2. Նրանում է (և ոչ մեկ ուրիշի, տես՝ REB) փրկությունը (ԳՈՅԱԿԱՆ Սաղմ. 130:7-ում և ԲԱՑ՝ Սաղմ. 130:8-ում, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿԱԳԻՆ, ՓՐԿԱԳՆԵԼ) բոլոր նրանց համար, ովքեր վստահում են Նրան (այսինքն՝ ուխտի ժողովուրդը, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏ և ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ)

Հիշեք, որ սուրբգրային հավատքը հավաքական է: Այն ընտանիք է: Զգուշացե՛ք ժամանակակից արևմուտքի կողմից անհատի վրա չափից ավելի շեշտադրությունից: Փրկությունն ունի ընդհանրական կենտրոնացում: Մենք փրկված ենք ծառայելու համար: Անհատի փրկության նպատակն է հավատացյալների մարմնի առողջությունն ու աճը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՎԱՏՔԸ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ Է

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչպիսի՞ զգացողություններ եք վերապրում Սաղմոս 130:1-4-ը կարդալիս:
2. Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է նշանակում «խորը տեղերը»:
3. Աստված պահո՞ւմ է մեր մեղքերի արձանագրությունը:
4. Արդյո՞ք Սաղմ. 130:5-6 նկարագրում է, թե ինչպես եք դուք զգում Աստծո և Նրա խոսքի հանդեպ: